Ալեքսանդր Շիրվանզադե

Գրազ

Նրանք վեց ընկերներ էին, գրեթե հասակակիցներ: Յուրաքանչյուրն ուներ որևէ արհեստ, որով և ապրում էր: Ինչ որ վաստակում էին, անմիջապես վատնում էին: Ի՞նչ կարիք կար վաղվա մասին մտածելու, քանի որ երիտասարդներ էին և ամուրի: Հավատարիմ ընկերներ էին, սիրում էին իրարու նամանավանդ քեֆերի ժամանակ, իսկ քեֆեր անում էին շատ հաճախ:

Պատահեց այնպես, որ վեց ընկերներից մեկը հիվանդացավ ու մեռավ: Մահվան դեմ խոչընդոտներ չկան, բոլոր դռները բաց են նրա համար: Այսպես փիլիսոփայեցին հինգ ընկերները և վեցերորդի մահն ընդունեցին որպես մի բնական տուրք հավիտենականությանը: Շատ տխրեցին, բայց բոլորովին առանց աղմկելու, մանավանդ արտասվելու: «Արտասուքը տղամարդին չի սազում», ասացին:

Այն քաղաքում գերեզմանատունը գտնվում էր հեռավոր բլուրի վրա: Սովորաբար գերեզմանները փորել էին տալիս թաղումից մի օր առաջ, որպեսզի թաղման օրը հուղարկավորները շատ չհապաղեն գերեզմանատանը:

Հինգ ընկերները, վեցերորդի դիակն ըստ սովորության մի օր առաջ եկեղեցի տանելով, գնացին մերձակա գինետուն հանգուցյալի հոգեթասը խմելու: Աշուն էր, ցուրտ ու խոնավ երեկո: Գավաթ գավաթի ետևից դատարկելով, գլուխները տաքացան: Խոսք բացվեց առհասարակ մեռելների, ուրվականների գերեզմանատների և այնտեղ թափառող ոգիների մասին: Բոլորն էլ տոգորված էին իրենց միջավայրի նախապաշարմունքներով և սնոտիապաշտությամբ:

Վիճաբանում էին, բայց ամենքն էլ նույն հավատի էին, թե հոգիները չեն մեռնում, և ոչ միայն այդ, այլև երկար Ժամանակ թափառում են երկրի վրա մինչև դեպի հավիտենականություն անցնելը:

Սեղանի ամենատաք միջոցին ընկերներից մեկը, որի անունն Աղասի էր, ասաց.

Տղերք, ես ուզում եմ մի գրազ առաջարկել ձեզ, կնդունե՞ք:

Ասա տեսնենք, գոչեցին ամենքը միաձայն:

Ո՞վ կարող է ձեզնից այս րոպեին գնալ գերեզմանատուն և վերադառնալ:

Ընկերները նայեցին իրարու երեսի: Հարցը բավական անսպասելի էր: Գնալ այս անձրևային, ցուրտ գիշերին՝ ուր կամենաք կարելի է, բայց գերեզմանատո՛ւն այդ դյուրին բան չէ: Չէ՞ որ խոսվեց, թե գերեզմանատները գիշերները լեցուն են թափառող ոգիներով, որոնց հանդիպելու համար հարկավոր է բացառիկ քաջություն: Բացի դրանից, չէ՞ որ հայերի գերեզմանատուն հասնելու միակ ճանապարհը թուրքերի գերեզմանատան քով է: Մինչև այսօր դեռ ոչ ոք այդ ճանապարհը գիշերով չի անցել:

Ես կարող եմ գնալ, ընդհատեց ընդհանուր լռությունը մեկն ընկերներից, որ ամենից շատ էր խմել և ամենից քիչ հարբել: Ինչո՞վ ես գրազ գալիս:

Հինգ թունգի գինով և մի լավ ճաշ:

Գալիս է:

Տղեք, վկա եղեք:

Թո՛ղ, Սարգի՛ս, հիմարություն մի արա, գոչեցին մյուս ընկերները միաձայն: Աղասին կատակ է անում:

Ամենևին, ասաց Աղասին, ես կատակ չեմ անում, կարող եմ երդվել մեր ընկերոջ դիակով:

Ապա դառնալով Սարգսին, ավելացրեց .

Ահա քեզ, վերցրու այս չախուն, տար և գցիր մեր ընկերոջ գերեզմանի մեջ: Եթե վաղը թաղմանը գնալով, այդ դանակն այնտեղ տեսնենք, գրազը տարած ես, և մենք կասենք, որ տղա ես, իսկ եթե ոչ աղջիկ ես, մենք մի լավ կծիծաղենք քեզ վրա:

Մյուս ընկերները շատ աշխատեցին երկու կողմերին համոզելու՝ թողնել անիմաստ գրազը, չկարողացան:

Կեսգիշեր էր արդեն, երբ խումբը, գինու վերջին գավաթները պարպելով, դուրս եկավ գինետնից: Եղանակն ավելի ցրտել էր, բայց անձրևը դադարել էր:

Դե՛, տղերք, բարի գիշեր, ասաց Սարգիսը, Աղասու դանակը գրպանը դնելով, ես մտնեմ տուն, յափունջիս վերցնեմ և հայդա: Վաղը պատարագին կտեսնվենք:

Ասաց և չքացավ թանձր խավարի մեջ:

Բարի գիշեր, ասաց Աղասին, վաղը դուք կլսեր մի նոր բան . . . Իսկ առայժմ գնանք քնելու:

⁂

Սարգիսն արագ քայլերով անցավ քրիստոնեաբնակ արվարձանը, մտավ թուրքերի նեղ ու ծուռ փողոցները և քառորդ ժամում դուրս եկավ քաղաքի սահմաններից: Երբ մոտեցավ թուրքերի գերեզմանատանը, տեսավ դիք-դիք դրված տապանաքարերը . նրանք հեռվից մարդերի էին նմանվում: Սարսուռի պես մի բան անցավ նրա մարմնով: Մի առ մի պատկերացան նրա աչքերի առջև այն բոլոր առասպելները, որ լսել էր շատ անգամ և որոնց հավատում էր: Բայց աշխատեց ամրապնդվել, երևակայելով, թե Աղասին որքան պիտի ծաղրակոծե իրեն, եթե քաջություն չունենա գրազը տանելու: Նա գնում էր արագ քայլերով, կարծես, իրավ, ոգիները հալածում էին նրան և ուրիշ փրկություն չուներ, բացի փախչելուց: Եվ սկսեց վազել, մերթ ընդ մերթ վայրկենաբար կանգ առնելով և ետ նայելով: Վերջապես, բավական հեռանալով թուրքերի գերեզմանատնից, համոզվեց, որ ոչ մի ոգի չի հետևում իրեն, քաջալերվեց և, քայլվածքը դանդաղեցնելով, բարձրացավ բլուրը:

Նա մոտավորապես գիտեր որտեղ է փորված հանգուցյալ ընկերոջ գերեզմանը և, կես ժամ փնտրելուց հետո, գտավ: Երբ մոտեցավ գերեզմանին, գրպանից դուրս բերեց Աղասու դանակը: Գերեզմանափորը չէր մոռացել հողաթմբի վրա դնել երեք խոշոր քարեր, որոնց սովորաբար ցցում են հանգուցյալի թարմ շիրիմի վրա, ասելով. «Եվ եղիցի անշարժ տապանս այս» և այլն...

Նա կանգ առավ գերեզմանի եզրին և պատրաստվում էր դանակը նետել այնտեղ, երբ տեսավ մի ճերմակ բան, նա նման էր սավանի մեջ փաթաթված մարդու: Թվաց, որ սավանը շարժվում է, կարծես ուզում է ոտքի ելնել: Առանց մի վայրկյան հապաղելու, վերցրեց երեք քարերից մեկը և ամբողջ ուժով ձգեց ուրվականի վրա: Լսվեց ինչ-որ խուլ ձայն, նման մարդկային ճիչի: Նա ձգեց երկրորդ քարը, ապա դանակը բաց թողեց գերեզմանի մեջ և շտապեց փախչել:

Նա վազում էր բլուրից վար, առանց ետ նայելու: Վախենում էր նայել...

Հետևյալ օրը բոլոր ընկերները եկեղեցումն էին: Չկար միայն Աղասին: Սարգիսը գրազը տարել էր, փափագում էր որքան կարելի է շուտ տեսնել նրան և պարծենալ: Նա պատմեց բոլորը, ինչ որ զգացել էր ու խորհել գիշերը, բայց գերեզմանի մեջ տեսած անհասկանալի երևույթի մասին լռեց: Նա վախենում էր, որ եթե ասի, ոչ ոք չի հավատալ և ընդհակառակը ինքը . կարող է ծաղրի ենթարկվել որպես երկչոտ երևակայող:

Աղասին չկար և չերևաց մինչև պատարագի վերջը: Ընկերները հետաքրքրվեցին գիտենալ՝ միգուցե հիվանդացե՞լ էր: Մեկը գնաց և տանից լուր բերեց, թե Աղասին մինչև լույս տուն չի վերադարձել և թե այժմ էլ հայտնի չէ ուր է նա:

Անձրև չկար, եղանակը սիրուն էր, պայծառ, արեգակնային: Այդպիսի օրին քաղաքից դուրս գալը մի տեսակ զբոսանք էր, թեկուզ մեռել թաղելու համար:

Հանգուցյալի դագաղը մինչև գերեզմանատուն տարվեց ձեռքով: Այդպես կամեցան նրա ընկերները, հուղարկավորները և օգնեցին նրանց: Գիտեին, որ գերեզմանատանը վարձատրվելու են առատ հացկերույթով:

Գերեզմանին մոտենալիս . ուղեկցող քահանան ու տիրացուները զգեստավորվեցին: Առջևից ընթանում էր քահանան ավետարանը ձեռքին, ետևից տիրացուները, այնուհետև դագաղը և հուղարկավորները:

Երբ քահանան մոտեցավ գերեզմանի եզրին, հանկարծ երգը ընդհատեց, արձակելով մի բարձր ճիչ և ետ ցատկելով:

Այնտեղ, գերեզմանի հատակում ընկած էր Աղասու դիակը, ջարդված գլխով: Ճերմակ սավանը ներկվել էր արյունով:

Գիշերը նա մի ուրիշ ճամփով եկել էր և սավանի մեջ պառկել ընկերոջ գերեզմանի մեջ Աարգիսին սարսափեցնելու համար: Այս եղավ նրա ընկերների ենթադրությունը...